ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 5-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 ծածկագրով պայմանագրում 2015թ-ի մայիսի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:

Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Մաքսային փաստաթղթերի ձևաչափերի և կառուցվածքի համապատասխանեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներին'' բաղադրիչի աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն:

Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Մաքսային փաստաթղթերի ձևաչափերի և կառուցվածքի համապատասխանեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներին'' բաղադրիչի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է, այն սահմանվելով մինչև 2015 թվականի հունիսի 24-ը: Աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու նպատակով 15.05.2015թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Առկա է տվյալ գնման գործընթացի մասով մասնագիտական խմբի եզրակացությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 117:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «15» Դեկտեմբեր 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-4 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1,1. Պայմանագրի թիվ-1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ''Մաքսային փաստաթղթերի ձևաչափերի և կառուցվածքի համապատասխանեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներին'' բաղադրիչի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել, այն սահմանելով մինչև 2015 թվականի հունիսի 24-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Այյունեթվորքս» ՍՊԸ
Ք.Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 900011017366, 900011054054	Հ/Հ 1930042785480100
Հ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	Ա.Եսայան